

երգեցողութեան ամբողջութիւնն ու կապը շնորհատուի:

Պակասող: Պատարագի արարողութեան վերաբերեալ մի քանի կտոր բաց է թողած. մի քանի մեղեդի, Աւագ Հինգշաբթի-ի սրբասացութիւնը, Ծննդեան և Զատիկի թափօրի Աւետիսաները, բոլոր տաղերը և մի քանի մանր բան:

Երկար (•) նշանը պէտք է այնպէս դնել, որ նա ազգէ իւրաքանչիւր հնգային դէին հաւասարապէս. այս ձեւնարկում մի քանի կերպ է կիրարկուած՝ մի տեղ դրած է, միւսում ոչ, երբեմն միայն առաջին հնգային գծի վերայ, ուրեմն ենթագրելի է, որ ազգում է և երկրորդին, երբեմն՝ երկուսի վերան էլ, և մերթ ոչ մէկի վերայ. նոյնը նկատում ենք դանշակի (Pianoforte) մէջ, ուր մինչև անգամ, հակադիր պատկեր է ներկայացնում մի և նոյն հատածի մի և նոյն կտորի ձայնական բաժնին, որին միացած է սերտ կապով:

Տպագրութիւն: Ընտիր թուղթ, մաքուր տիպ և յարմար գիրք ունի: Մի քանի տպագրական սխալ նկատեցինք. «Գոհանամք» էջ 160, դաշնակի բաժնում, հատած 1. ա. հնգային դիծ. վերջին d խաղն ունի $\frac{1}{4}$ ամանակ, պէտք է $\frac{1}{8}$ լինի:

Պակասում են հետեւեալ թուահամարները.

էջ 21.	4	համարը չկայ.
» 54.	18	» »
» 105.	8	» »
» 117—122.	13, 14, 15	» »
» 145.	29	» » և ըն.

Մի քանի թուահամարներ կան, որոնց կցած են A, B, C տառերը, բայց չկան պարզ ձևերը՝ առանց տառերի. մենք այս բացատրում ենք այսպէս. երևի յարգելի երաժիշտն ունեցել է յիշեալ կրտորներից մի քանի տեսակ ներդաշնակած, կամ մի քանի եղանակ, բայց ինչ ինչ պատճառներով տպագրութեան չէ յանձնել, իսկ համարները թողել է անփոփոխ. օր. էջ 156 և 158 կրկնուել է 34C-էն երկու անգամ և չկան 34, 34A և 34B թուահամարները և սոցա համապատասխանող կտորները. և ըն.

Եզրակացութիւն: Յարգելի երաժիշտ Պ. Մակար Եկմալեանը մեր երգեցողութեան ամայի անդաստանի մէջ ներդաշնակութեան անդրանիկ բուրաստանը տնկեց, Սրտանց ուրախ ենք, որ Հայերս այժմ կարող ենք պարծել, թէ մենք էլ յետ չենք մնացել վսեմ գեղարուեստի և կատարելագոյն երաժշտութեան զարգացումից, Դէպի կատարելութիւն ձգտելով՝ մենք կուզէինք մի այսպիսի ծրագրով մշակած և կազմած, գեղարուեստական միութիւն ներկայացրնող, պատարագ.

ա. Խորշել օտար և աւելորդ գեղգեղանքներից,
բ. նոյն եղանակի զանազան երգուածքներից պատշաճաւորն ընտրել:

գ. Եղանակների տաղաչափութիւնն ու ներդաշնակութիւնը, ըստ կարելոյն, երգերի խօսքերի իմաստին համաձայնեցնել, պահելով միանգամայն Հայոց եկեղեցական երաժշտութեան ոճն ու ողին և մի այսպիսի սրբազան աւանդին վայել՝ պարտ ու պատշաճ ակնածութիւնն ու հաւատարմութիւնը:

և դ. Եղանակն ու տաղաչափութիւնն ուղղելիս առաջնորդ ունենալ ձեռագիր պատարագամատոյցները և հին խաղերը, որոնք անշուշտ աւելի խօսուն են՝ մեռած լինելով, քան մեր արգի կենդանի մեռած ձայնանիշները:

Կոմիտաս Վարդապետ.

Քերթն.

ԱՂՈՒԱՆԸԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Beiträge zur Albanischen Geschichte վերնագրով մի ուսումնասիրութիւն է լոյս ընծայել Ալուանից պատմութեան մասին պ. Յակովբ Մանանդեանը անցեալ տարի, որ ներկայացուցած է Միայի համալսարանի իմաստասիրական ճիւղին զոկտորութեան աստիճան ստանալու համար:

Այս գրքոյի կազմուած է հետեւեալ մասերից. «Հետախուզութիւն Ռաիսայի Մովսէս» պատմագրի մասին, որ մեղանում աւելի յայտնի է Մ. Կաղանկատուացի անունով (էջ 3—22), որին կցուած է մի զուխ Ալուանից եկեղեցու պատմութեան (էջ 23—31): Ապա մի յաւելուած (էջ 31—48), որ Կաղանկատուացու պատմութեան հետեւեալ զլուխների Գերմաներէն թարգմանութիւն է. Ա. 1. Բ. 2. 10 և 11:

Այստեղ առանձնապէս հետաքրքրական է Կաղանկատուացու որ դարու պատմագիր լինելու խնդիրը, որ խկապէս կազմում է այս ուսումնասիրութեան հիմքը, և որ նորա պատմութեան լոյս տեսնելու օրից (Մ. Ըմինի հրատարակութիւնը Մոսկուայում և Կ. Վ. Շահնազարեանինը Պարիսում 1860) զիտնականների քննութեան առարկայ է դարձել:

Պ. Ման. այս խնդրով զբաղուողների մասին տեղեկութիւններ հաղորդելով յիշում է, որ Կ. Վ. Շահնազարեան և Գարեգին Զարբա-

նախնան 1) Կաղանկատուացուն Է. դարու պատմագիր են համարում՝ հիմնուելով Բ. 14 և 28 զուգններում իրեն ափանատեսի նկարագրած պատմութեան վերայ:

Փրանսացի Էօֆեն Բօրէն, որին և հետեւում է գերմանացի Նոյմանը համարում են Ը. դարու, իսկ Բրոսսէն և Պատկանեանը Ժ. դարու: Առաջինը Գ. զրքում յիշուած Ռուզիկների ձեռքով Պարաաւի առումը և Աղուանից կաթուղիկոսների ցանկը (որ ըստ Բօրէի ընդմիջարկութիւն է) հիմնուեց առնելով իսկ Պատկանեանը թէ և բերում է փաստեր, որոնցով համաձայն է Շահնազարեանին և Զարբանաշեանին, բայց տրամադիր է Ժ. դարու համարել. «մենք Է. դարու մատենագիր կհամարէինք, եթէ հայոց մատենագրներից որեւիցէ մէկը Աղուանից պատմութեան միայն երկու գիրք վերագրէր, որովհետեւ երրորդ գիրքն անտարակոյս Ժ. դարու գործ է»:

Պ. Ման. վերջիններիս կարծիքին համաձայնում է իւր հետազոտութեամբ, որ և աշխատել է նոր փաստերով վաւերացնել: Է. դարու պատմագիր համարողների փաստերը ջրում է այն հիմամբ, որ 1) Մ. Կ. ոչ թէ ինքն է ափանատես, այլ իւր աղբիւրները, որ նա չէ մշակում և իւր այդ աղբիւր կազմող մատենագրների անձնական գաղաղութիւններն արտադրում է (տ. էջ 12). յիշուած են կուրօրէն ուրիշներից քաղելու 2 օրինակ:

2) Այնուհետեւ Մ. Կ. Բ. զրքի 174 զուգն հետազոտելով Բեդոյի և Վստամի մասին պատմածից՝ «ի ստույգ եւ ի լոռն պատմագրաց այսպէս ծանեաք, խօսքերից հետեցնում է, որ վերեւ պատմածները այդ անցքերին ժամանակակից աղբիւրներից է քաղել ինքը Մ. Կ. և տարօրինակ է, ասում է պ. Ման., ժամանակակից պատմագրի բերնում վերոյիշեալ խօսքը. և

3) Աւելի տարօրինակ է և պատմականօրէն անհնարին է, յաւելացնում է պ. Ման., որ Միհրանից, Սոսրով Փարուէզի ազգականից, սկսեալ մինչև Զուանշիր իշխանը միջանի

տանեակ տարիներում 6 սերունդ իշխում են:

4) Այս են ապացուցանում, ըստ պ. Ման. ի, և Բ. զրքի 29 և 33 զուգնների հակասութիւններն՝ ասենք թէ տարբերութիւնները:

5) Մ. Կ. յիշում է հայոց Եղիա կաթուղիկոսին, որ Ը. դարում էր, ուրեմն Է. դարու հեղինակ չէ կարող լինել:

6) Պ. Ման. Գ. 23 էջ 271 խօսքերից հետեցնում է այս երեք զրքերի միմեանց հետ ունեցած կապը:

7) Վերջապէս 944-ին Ռուզների Պարաաւին արեւելու պատմութիւնը Մովսէսինը համարելով հետեցնում է, որ Մ. Կ. քաղել է Սորենացուց, Պետրոս Սիւնեցուց, Վերոյից և ուրիշներից:—

Առաջին կէտի վերաբերմամբ զոնեա Վիհիկի տեսեան պատմութեան մէջ ա. գէմքով խօսելը շատ բնական է և յատուկ տեսիլներին. իսկ «ես վիրոյ» խօսքերը չեն կապւում նախընթաց խօսքերի հետ և կարծես բան է պահաս, այնպէս որ այստեղ կամ փոփոխուած, եղծուած է, յաւելուած է, կամ բան է պահաս: Թէ որչափ մեր այս երկու ենթադրութիւնները հաւանական են Մ. Կաղանկատուացու վերաբերութեամբ, բաւական է կարդալ արժ. Սաքի վ. ի Մ. Կ. Աղուանից պատմութեան բնագրի վերայ եղած փոփոխութիւնները 1) և Մ. Կ. Աղ. պատմութեան երկաթագիր օրինակից մի պակաս հատուած 2), յօդուածները մեր ասածի հաւանականութեան համոզուելու համար: Հայոց Եղիա կաթուղիկոսի յիշատակութեան (5 կէտ) զալով՝ կասնք որ եթէ Մովսէս Վերոյի Սաղիւնների բանակ զնալու ժամանակ 18 տարեկան լինէր, և 703 թուականի կաթուղիկոս Եղիային յիշում է, պէտք է 93—95 տարեկան եղած լինէր, և միթէ այս առասպելական տարիք է, այն էլ հնում:

Երկրորդ. 590—637 թուականը ուրեմն

1) Գ. 2. Գլխաւորապէս ոմից չէ նկատուում, այլ եւ վասն զի «իրեւ. ա կ ա մ ա տ ե ս կ ա ղ ա տ է ... իսկ իւր պատմութեանը պատկերացած է 653—685, ինչպէս կ'յայտնուի պատմածին և ոմին» (Մատենագ. էջ 423. նմ. էջ 431):

1) Արարտ 1897 թ. Փետ. էջ 67—70.
2) Արարտ 1897 ապրիլ էջ 161—163: Ինչպէս երևում է պ. Մանուկեանցը չէ կարողացել օգտուիլ Արարտի այս համարներից, երեւի իւր զբոյժին առիթի վաղ լոյս տեսնելու պատճառով:

47 տարում վեց սերունդ է իշխել, անկարելի չէ և ոչ իսկ պատմաբանօրէն: Այստեղ միջին թուով ամէն մէկը իշխում է 7 տարի 10 ամիս, այն ինչ բաւական է աչքէ անցնել հօռվմայեցւոյ պատմութեան Կոմմոդուսից մինչև Արիլիանուս (180—270) յաջորդող կայսրներին անուանց ցանկը: որոնք միջին թուով շատ աւելի քիչ են թագաւորում կամ աչքի առաջ բերենք Արչակունի Հայաստանի բաժանումից մինչև անկումը, համարեա թէ նոյնչափ ժամանակում նոյնչափ իշխողներ կան, ինչպէս Միհրանի ցեղն է Աղուանքում:

Երրորդ. 2է կարելի ուրանալ որ Բ. դրքի 29 և 33 գլուխները խառնաշփոթ են. եթէ ընդունենք անգամ որ այս գլուխները մասունքների տարբեր դիւարի մասին են, անհաւանական չէ որ մեծ և սրբութեան հռչակ վայելող անձինքների մասին գեա իրենց կենդանութեան ժամանակ իրական հիմունքի վերոյ տարբեր աւանդութիւններ են գոյանում: Բայց այն ընդհանուր կէտերից, որ կան երկու գլուխների մէջ, ամենից մեծ ապացոյց են վերնագիրները. ուր մնաց որ ԻԹ. գլխի «ընթացատուս գրուագս բանից սակաւ ինչ նուազ դաի» բացատրում է ԼԳ. գլխի վերնագրով «յաղագս... վիպասանումն զլուցատրարար» որ մենք այսպէս ենք հասկանում թէ քիչ զբաղելով «ճմարտախօս գրուագս բանից» յաւելացնում ենք այդ մասին, անշուշտ ժողովրդի մէջ խօսուած, զրոյցներ ասածներն էլ, որ աւելի ընդարձակ է քան առաջինը, ինչպէս ընթերցողն ինքն կարող է տեսնել: Բայց այսպէս թէ այնպէս միթէ ժամանակակից մի պատմագիր կարող է իւր ժամանակի բոլոր անցքերն իմանալ այնպէս հանգամանօրէն, որ վստահի գրի առնել սուանց ստուգելու մօտաւոր անձնաւորութիւններից և աղբիւրներից, արդեօք մեր ժամանակին մի ժամանակագիր նոյնպէս չէր վարուիլ: Բիշ են պատահում նոյն իսկ մեր օրերում տարբեր աւանդութիւններ զանազան պատմական անցքերի մասին, և ամենեւին զարմանալի չէ որ մի անոճ պատմագիր, մանաւանդ թէ ժամանակագիր, տարբեր աղբիւրներից, թղթերից, գովումներից օգտուելով կուրօրէն արտադրէ նոյն դէպքի զանազան աւանդութիւններ:

Եթէ իրօք այդ միեւնոյն «գեալ մասանցն է: Այսպիսով ուրեմն պիշ-դ կէտին զալով՝ կարող ենք ասել, որ այս խօսքերը մի կուրօրէն արտադրող ժամանակագրի բերնում, ժամանակակից աղբիւրին ևս կարող են վերաբերել:

Կասկած չկայ որ Մ. Կ. օգտուել է Խորենացուց¹⁾ կարծում ենք և Սերէոսից: Ըստ ամենայն հաւանականութեան (Բնդոյի և Վստամի և Հերակլի ու Խոսրովի մասին) «այդ ուրիշ աղբիւրները անկարելի է ինքը հնդկանկը, ինչպէս պ. Ման. գիտել է. յաւելացնենք որ այս բանը պարզ երևում է պատմագրի մի քանի գլուխների վերնագրից (ա. Բ. 52. Գ. 19). ուրեմն ասենք թէ օգտուած լինի և Վերոյից և Պետրոս Սիւնեցուց: Բայց դժբա գեա ապացոյց չեն, որ Մ. Կ. Ժ. զարու պատմագիր է: Իսկ պ. Ման. ի գլխաւոր հիմունքը Բ. դրքի Ա. գլխի վերնագիրը, «պատմութիւն ի դէպ գրոցս» (առաւել լաւ, եթէ ամբողջ գրքի վերնագիրն է) մենք չենք հասկանում „Die Geschichte nach den unter meiner Hand befindlichen Schriften“ այսինքն թէ, «Պատմութիւն մեր ձեռքի տակ գտնուած գրուածքներից», այլ ընդ հակառակը՝ Պատմութիւն որ իղէպ է, յարմար, պատշաճ է մեր այս գրքին. մանաւանդ որ յաջորդ տողերով բացատրում է պատճառը. «զտանին զրոյցք աւելից կողմանց, որք ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաք մակագրել ի տառս տաղաչափութեան մերում». այսինքն զրոյցներ նա չէ տեսել հին պատմագրներում, ուրեմն առաւել ևս չէր կարգացել իւր ձեռքի տակ ունեցած պատմագրներում: Բայց այստեղ յառաջ է բերում Աղուանքում կամ Պարսկաստանում Անդոկ Սիւնու և նորա Բարիկ որդու մասին եղած մի գրոյց, մի պատմութիւն, որ մեր պատմագրներից ոչ մէկում էլ չկայ: Միւս կողմից ի՞նչն էր ստիպում այդպէս ընդհանուր կերպով խօսելու իրրե թէ իւր ձեռքի տակ գտնուած գրքերից է օգտուած, այն ինչ կան գլուխներ ևս ուր վերնագրով Մ. Կ. յայտնում է իւր աղբիւրներ:

1) Ստեփանոս յիշում է Մ. Կ. Լ. 8: Ստեփանոսից և Բ. 3: է. իսկ վերջին տողեր Ստեփանոսի մասին քառացի փայտածք են. կան ևս այլ գրութիւններ:

ըր Բ. 52, Գ. 19, կամ իրրե ախանառեւ և վկայում Բ. 51:

Ի վերջոյ պէտք է խոստովանել որ զ. և է. կէտերը պ. Մանանդեանցի զօրեղադոյն փաստերն են. մէկով ապացուցուած է երեք զրբի կապն ու միութիւնը միւսով ժամանակը և ապա Մխիթար Այրիվանեցու երկու յիշատակութիւնները Մ. Կ-ցու Ազուանից կաթուղիկոսների ժամանակադրական ցանկի հետ համեմատելով որոշում է մեր պատմագրի ժամանակը՝ 980—1000 թուականը:

Մի բան այստեղ միայն մոռանում է պ. Մանանդեանը թէ ինչպէս մի այդպիսի կուրօրէն արտագրող ժամանակագիր վերջացում է իւր պատմութիւնը մի ամփոփմամբ, որ մի առօրինակ բան է մեր պատմագրների մէջ և որ աւելի հասուն պատմագրի յատուկ կլինէր:

Այսպէս կամ այնպէս չենք կարող բացել ի բաց մերժել մեր առջև դրուած իրողութիւնը, բայց միւս կողմից յառաջ է գալիս Անանիա Մոկացու թուղթը¹⁾ որի կապը Մ. Կաղանկատուացու հետ դժուար է ժխտել: Ո՞վ պէտք է լինի հապա այդ Ազուանից պատմագիրը, որի մասին Մոկացին ակնարկում է:

Մեր մտադրութիւնը չէր բնաւ նուազեցնել պ. Մանանդեանի աշխատասիրութեան արժանիքը, մենք ուզեցինք ցոյց տալ որ այս խնդիրն իսկապէս դեռ չէ վերջացած և ինչպէս ասում են դեռ շատ ջուր կլինիքէ. իսկ աղբիւրների ու ձեռագրների մի պարզ ամբողջական ուսումնասիրութիւն, որ մենք կարող ենք սպասել պ. Մանանդեանից, գուցէ կարող էր այս խնդիրը զրական կերպով որոշել:

Ս. Կ.



¹⁾ Աւարաւ. 1896. յունուար 25—26. փետրուար 67—71. մարտ 125—128. ապրիլ 176—179 Խալիկ վ. ի յօդուածը և զպիւր Գալուստ Տ. Միքայէլեանի, Աւարաւ. 1897 փետրուար 91—96 և մարտ 129—144:

* Սոյն գրութեմէն մասին մի նպաստար քննադատութիւն և գրել Գրութ. Կատակերու. Theol. Litteraturzeitung հանդիսի մէջ, № 2, 1898:

ԳԱՒԻԹ ԲԱՂԻՉԵՑԻ

Մեր անցեալով զբաղուող հայ և օտարազգի բանասէրները՝ զրեթէ բացառապէս տենդային եռանդով աշխատում են լուսարանել մեր հնագոյն մատենագրութեան բաղմապիսի երեւոյթները: Կարող ենք ասել, որ արդէն Ե. դարու պատմագիրները զանազան ժամանակներում տարբեր աստիճանի քննադատների մի լեզիոն են հանդէս բերել: Այնքան ճոխ է օրինակ Խորենացուն ընծայուած քրննագատական մատենագրութիւնը, որ հետզհետէ նրա ուսումնասիրութիւնը առանձին մասնագիտութիւն է դառնում: Մինչ այսպէս մեր ոսկեդարեան զրականութիւնը դէպի ինքն է ձգում Հայի անցեալով հետաքրքրողներին, մեր միջնադարեան մատենագիրները մնում են զրեթէ բոլորովին անուշադիր: Մասամբ դուցէ այդ է պատճառը, որ վերջին դարերում ծաղկող պատմագիրներից շատերի անունն անգամ անյայտ է մեզ: Այսպէս օրինակի համար Սիմէօն Բախուանցու, Մինասենց Թովմա վարդապետի, Յովհան քահանայ Արծիշեցու, Դաւիթ Բաղիշեցու, Յովհաննէս կրօնաւորի, Գրիգոր վարդապետ Կամախեցու, Բարսեղ վարդապետ Վարդեցու, Շուղանցի Բարդողիմէոս վարդապետի, Վարդան վարդապետ Բաղիշեցու և այլոց, մեծ մասամբ անուններն իսկ անյայտ են¹⁾: Գրիգոր Ժերեկցի «Յիշատակարան Աղեւից» պատմական երկը նորերումս լոյս ընծայեց մեծարգոյ պ. Գ. Խալաթեանց:²⁾

Այս բոլոր տարեգիրները ի հարկէ շատ կողմերից հետաքրքրական են. բայց աւելի կրեւոր են հետեւեալ 3 պատճառներով. նախ՝

¹⁾ Սիմէոն Բախուանցին գրել է Պոս.—Պո (1392—1401) 9 տարուայ ժամանակակից պատմութիւն. Մ. Թովմա վարդապետը 1419—1452, 33 տարուայ պատմութիւն. Յովհաննէս կրօնաւորը 11 տարուայ 1440—1451. Յովհաննէս քահանայ Արծիշեցին 16 ամաց տարեգրութիւն 1531—1547. Գրիգոր վարդապետ Կամախեցին 1559—1594. եւայլն: Այս բոլոր պատմագիրների ծաղկման ժամանակի և քովանդակութեան մասին մեր պատմաստեմ «ձեռագրների ցուցակի» մէջ կիսուեմք քննարկութեամբ:

²⁾ Վարդաշապատ. 1897 թ. ա. էջիմամբի. արտ. «Աւարաւից»: